ԵՐԵՍՈՒՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Գիշերս ես ի դուրս ելայ, քիչ մի լուրջ ու քիչ մի գինով.
Իմ եարըն ինձ դէմ դիպաւ, ծոցն ի լի կարմիր խընծորով.
Ձեռըս տարի, ձայն տըւի. նա կանչեց տարաւ ճըղներով.
Մանկտի՛ք, ձեր արեՆ ասեմ, գէմ չառի ես իրմէն ճորով:

Բ.

Քանի՛ ու քանի՛ ասեմ՝ Մի՛ երթալ ի սէրըն կընկան,
Որ նա չաւիրէ զանունդ ու լընիս փողոցի նըման.
Էն որ թողել զիւր հալալն ու եկեր քեզիկ երեւան,
Կարող է ըզքեզ սիրէ ու մէկ էլ առնէ քեզ փոխան:

Գ.

Է՛ր իմ կարմըրուկ խընձոր, բարակիկ ճուղըդ կու կենաս.
…… տերեւ քեզ, արեւէդ մահրուկ կու մընաս.
Երեսդ ի լուսին արա Սուրբ Խաչին՝ որ կարմըրանաս,
Քաղեն ի սաւհաթ տանին, դու ամէն մարդոյ պիտենաս:

Դ.

Իմ բարձրագընաց լուսին, շատ բարեւ տար իմ գօզալին:
– Քո բարեւըն ես տանիմ, չեմ գիտեր տունըն գօզալին:
–Գօզալն ի վերին թաղին, բարձըր պատն ու ծառն ի միջին.
Գընա՛ ու կամար կապէ՛, շողդ իջնէ ի դրախտին միջին.
Ըսկըսիր (?) բարեւըն տո՛ւր, աչքըն բա՛ց էն իմ գօզալին:

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Ո՞ւր է որ սիրեցաք զիրար, դուն ինձ մեղր եւ ես քեզ շաքար.
Հիմայ ի՞նչ տեսար դուն յիս որ դարձար զէտ երկաթ ու քար.
Ձինչ որ չար աչկունք արաւ, թող կուրնայ եւ դառնայ խաւար.
Հիմայ չիսիրե՞նք զիրար. զըրուցէ՛, խըռով մի՛ կենար:

Բ.

Այս անցաւորիս վերայ իմ նասի՛պըն թող դուն լինիս.
Մընտեր ես ի մէջ սըրտիս, նաչքերուս, թ՚ի՛նչ խօշ կու թընիս.